

# ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2017թ. նոյեմբերի 2-ի նիստի

(արձ. N4)

1. ԵԹԿՊԻ-ի 2017թ. եկամուտների և ծախսերի ճշտված նախահաշվի վերաբերյալ Հ. Նալբանդյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն,
  - 1.1 հավանություն տալ 2017թ. եկամուտների և ծախսերի ճշտված նախահաշվին և ներկայացնել ինստիտուտի կառավարման խորհրդի հաստատմանը:
2. Հանձնարարել ինստիտուտի բոլոր ստորաբաժանումներին մինչև ս.թ. դեկտեմբերի 1-ը ներկայացնել 2016-2017 ուս. տարում կատարած աշխատանքների հաշվետվությունը,
  - 2.1 հանձնարարել ուսումնակրթական գծով ռեկտորի օգնական Հ. Իսրայելյանին մասնակցել հաշվետվությունների նախապատրաստման գործընթացին:
3. ԵԹԿՊԻ-ի 2013-2017թթ. ռազմավարական ծրագրի կատարման արդյունքների և միջանկյալ քննությունների ընթացքի վերաբերյալ ՈԱԿ-ի ղեկավար Է. Հակոբյանի զեկույցն ընդունել ի գիտություն,
  - 3.1 ԵԹԿՊԻ-ի 2018-2023թթ ռազմավարական ծրագիրը մշակելու նպատակով՝ հանձնարարել ՈԱԿ-ի աշխատակազմին ինստիտուտի բոլոր ստորաբաժանումներին բաժանել իրենց մասով նախատեսվող ռազմավարական ծրագրի ուղղությունները,
  - 3.2 հանձնարարել ինստիտուտի բոլոր ստորաբաժանումներին մինչև ս.թ. նոյեմբերի 6-ը լրացնել և ՈԱԿ ներկայացնել Բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության խթանման գործիքակազմի վերաբերյալ ստացված հաշվետվությունը,
  - 3.3 հանձնարարել ՈԱԿ-ի աշխատակիցներին հանդիպում կազմակերպել ամբիոնների վարիչների հետ, քննարկել միջանկյալ քննությունների ընթացքը,
    - 3.1.1 հանձնարարել պրոֆեսորադասախոսական անձնակազմին քննությունների ընթացքում իստիվ պահպանել ակադեմիական ազնվության կանոնները:
4. Հավանություն տալ երիտասարդ բեմադրիչների մրցույթ հայտարարելու վերաբերյալ Ուս. թատրոնի ներկայացրած ծրագրին,

4.1 հանձնարարել Ուսումնական թատրոն-լաբորատորիայի տնօրեն Է. Բարսեղյանին հստակեցնել մրցույթի ձևաչափը՝ նկատի առնելով քննարկման ընթացքում արված առաջարկները,

4.2 երիտասարդ բեմադրիչների մրցույթի ձևաչափի շրջանակներում հայտարարել մրցույթ 2 բեմադրության համար՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակին:

Հայտերի ընդունման վերջնաժամկետ սահմանել ս.թ. դեկտեմբերի 15-ը:

5. Հանձնարարել հաշվապահությանը ինստիտուտի բուժկետն անհրաժեշտ դեղորայքով ապահովելու համար հատկացվող գումարի չափն ավելացնել:

6. Հանձնարարել պրոռեկտորներին քննարկել և լուծել Կինոյի և հեռուստատեսության ամբիոնի տեղափոխման հարցը:

7. Յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթվա երեքշաբթի օրը հրավիրել ԳԽ նիստ:

Այդ մասին ծանուցել ԳԽ բոլոր անդամներին:

8. ГИТИС-ի կազմակերպած ուսանողական ներկայացումների փառատոնին մասնակցելու համար Մոսկվա ուղարկել Ալեքսանդր Գրիգորյանի ռուսական կուրսի ուսանողներին:

**Գլխավոր տնօրեն**

**Գ.Հովհաննիսյան**